

ՆԱՅԿԱՆՈՒՇ ՄԻՍԿԱՐՅԱՆ

ՆԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ԱԻՐԱՅԻՆ ՏԱՂԵՐՈՒՄ

Տասնյոթերորդ դարը հայոց լեզվի զարգացման որակական անցումների ժամանակաշրջանն է, երբ պայքարում են գրաբարյան, միջինհայերենյան, բարբառային և նոր-նոր ձևավորվող աշխարհաբարյան կառույցները:

Լեզվական փոփոխությունները, ձևավորված լեզվական նոր կանոններն ավելի ցայտուն են դրսևորվում բայերի խոնարհման ընդհանուր համակարգի մեջ, որը և իր զարգացման օրինաչափություններով մեծ ազդեցություն է թողնում հայերենի հետագա զարգացման վրա:

Միջին հայերենում ձևավորվում են գրաբարին անհայտ վաղակատար և հարակատար դերբայները, որոնցով էլ կազմվում են բայական նոր ժամանակներ:

Միջին հայերենն ունի հետևյալ ժամանակները՝ ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, ապառնի, վաղակատար, հարակատար, որոնցից մի մասը ժամանակակից հայերենի մասն կազմվում է դերբայով և օժանդակ բայով:

Լեզվական վերոհիշյալ բոլոր իրողություններն իրենց արտացոլումն ունեն այդ ժամանակաշրջանում ստեղծված գրեթե ողջ գրականության մեջ՝ լինի դա գիտական, փիլիսոփայական, գեղարվեստական թե պատմական: Սակայն անգամ տասնյոթերորդ դարի որոշ հեղինակներ, աշխատելով հավատարիմ մնալ գրաբարին, փորձել են գրել ավելի կանոնիկ լեզվով, թեև ժամանակաշրջանի լեզվական ազդեցություններն անվերապա թողնում էին իրենց հետքը: Այսպիսով, ստեղծվում էր լեզվական ուրույն մի որակ, որտեղ գրաբարը, միջին հայերենը, բարբառները համդես էին գալիս գիրկընդխառն՝ փոխազդեցության տարբեր աստիճաններ ի հայտ բերելով:

Այս հոդվածում կներկայացնենք այդօրինակ հեղինակներից մեկի՝ Նաղաշ Հովնաթանի սիրային տաղերում արտացոլված բայական համակարգի լեզվական իրողությունները և զուգահեռներ անցկացնելով գրաբարի հետ՝ կփորձենք պարզել, թե հեղինակն ինչքանով է հարազատ մնացել հայոց լեզվի դասական շրջանի օրինաչափություններին:

Պետք է նշել, որ Նաղաշ Հովնաթանը մեկն է այդ լեզվով ստեղծագործող այն հեղինակներից, որոնք գրել են ավելի հասկանալի ու միևնույն ժամանակ՝ փոքրիշատե կանոնիկ լեզվով: Այս երևույթը պայմանավորված է մի կողմից բանաստեղծի անհատականությամբ, մյուս կողմից էլ՝ այն միջավայրով, որի մեջ անցել է նրա կյանքը:

Նաղաշ Հովնաթանը հիմնականում ապրել ու ստեղծագործել է Թիֆլիսում: Դրա հետևանքով էլ, թերևս, նրա ստեղծագործություններում մաս թիֆլիսահայ բարբառի տարրեր են պարունակվում:

Նաղաշ Հովնաթանի սիրային տաղերում գերակշռում են բայական համակարգի մի-

ջինհայերենյան դրսևորումները, թեև առկա են մաս դրանց գրաբարյան և արդեն աշխարհաբարյան կառույցներ:

Ավելի հաճախ նկատվում են *կու* (*կը*) մասնիկի կիրառության դեպքերը, որոնք այս հեղինակի տաղերում հանդիպում են թե՛ ներկա («...դու միմակ *կու խմես*¹...», «Ծարավ *կու կանչես*...» (էջ 16), «...Թամաշա *կանես*...» (էջ 17), «Հոգիս *կու հանես*...» (էջ 19), «...Խելքս *կու տանես*...» (էջ 19), «...Խելքս *կու ցրվի*...» (էջ 25) և այլն) և թե՛ պայմանական ապառնի ժամանակների իմաստներ արտահայտելու համար («Գու էլ *կու մեռնիս*, չե՛ն ամմահական...»* (էջ 50))²:

Սակայն Հովնաթանը ներկա ժամանակի համար գործածում է մաս անկատար դերբայ + *ես* օժանդակ բայ աշխարհաբարյան կառույցը: Բերենք օրինակներ. «Օրծադում *ես*...» (էջ 23), «Միտս *ես րեքում*...» (էջ 17), «Ես խիստ *ես երվում*»**...» (էջ 17), «Ծածուկ *կենում* *ես*...» (էջ 33) և այլն:

Ես օժանդակ բայը Հովնաթանը հիմնականում գործածում է առանց որևէ հնչյունափոխության, սակայն չպետք է մոռանալ, որ մա 17-րդ դարի բանաստեղծ է և իր ստեղծագործական ողջ կյանքն անցկացրել է Թիֆլիսում, ուստի զերծ չի մնում թիֆլիսահայ բարբառի ազդեցություններից (դա վերաբերում է ոչ միայն ներկա ժամանակի կազմությանը), այլն է՝ *ես* օժանդակ բայի խոնարհված ձևերի համար ունի *ամ*, *իս*, *այ* տարբերակները: Օրինակ՝ «Մնացել *ամ* հելրան ու մաթ...» (էջ 26), «Գեղեցիկ պատկեր *իս* դու...» (էջ 25), «...թե իմ ետրըն տա՞ն *այ*...» (էջ 29) և այլն:

Հովնաթանի տաղերում հանդիպում են մաս գրաբարյան ներկա ժամանակով դրված ձևեր, որոնք արտահայտում են հենց սահմանական ներկայի և ոչ թե ըղձականի իմաստ: Օրինակ՝ «Բեզ հետ *նստիմ*...» (էջ 24), «Կարոտ շատ *ունիմ*...» (էջ 15), «Գիտե՛...» (էջ 17), «Մատնումդ *կայ*...» (էջ 16), «Մեջլիս *նստեն*...» (էջ 21), «Գիմի *խմեն*...» (էջ 21) և այլն: Իհարկե, այսպիսի կիրառություններն անհամեմատ քիչ են, և հիմնականում այդ ձևերն արդեն ըղձական ապառնու իմաստ են արտահայտում՝ «Թող մեկ *համրուրեն*...» (էջ 15), «...հեռանամ իմ տանեն...» (էջ 17), «սուտաթիս մման *քաշե*...» (էջ 33), «...սիրտս *հովանայ*...» (էջ 18), «Բեզ ո՞հց *մոռանամ*...» (էջ 5), «Ես ո՞հց *հեռանամ*...» (էջ 6), «Ամա՛ն-ամա՛ն զքեզ *գովես*³...» (էջ 27) և այլն:

Գրաբարատիպ և միջինհայերենյան սահմանական ներկայի ձևերը մրցակցում էին, սակայն արևելյան բարբառներում արդեն ձևավորվում է մոր օրինաչափություն. հայոց լեզուն պահպանում է գրաբարատիպ և *կը*, *կու* մասնիկով բայական կառույցները՝ դրանց մեջ, սակայն, զարգացնելով այլ եղանակի իմաստ՝ ըղձական և ենթադրական կամ պայմանական: Իսկ ներկայի արտահայտման համար ստեղծվում է և գնալով ավելի լայն տա-

¹ Նադաշ Հովնաթան, Տաղեր, Երևան, 1983, էջ 15:

(Այս գրքից կարարված մեջբերումների էջերը կնշվեն փեքսքում):

* Պայմանական ժամանակի իմաստով օրինակն այսպեղ միակն է:

² *Կը* (*կու*) մասնիկով ըղձական ապառնու արտահայտությունը հեղինակի սիրային փաղերում հանդիպում է մեկ անգամ:

** Սա բարբառային արտահայտությամբ բայ է՝ աշխարհաբարյան ներկայի կառույցով:

³ Այս բայի համար Հովնաթանը ունի երկու փաղերակ՝ *գովել* (Աման-աման զքեզ *գովեն*) և *գովել* («Ուրախութեան զքեզ *գովեն*...» (էջ 27)):

րաժում գտնում անկատար դերբայ + *եմ* օժանդակ բայի գերկայի կառույցը:

Մենք կատարել ենք վիճակագրական քննություն՝ պարզելու համար տասնյոթերորդ դարում լեզվական հիմնում որակների մրցակցության աստիճանը: Ներկայի իմաստ արտահայտելու վերը նշված միջոցը (անկատար դերբայ + *եմ*) Հոլմաթանի սիրո տաղերում հանդիպում է քառասունութ անգամ, մինչդեռ *կը* (*կու*) մասնիկով գերկա ժամանակի կիրառությունները հարյուր երեսունհինգն են⁴:

Գրաբարյան անցյալ անկատարի ձևեր հեղինակի սիրային տաղերում չեն հանդիպում, սակայն աշխարհաբարյան կառույցով այս ժամանակն ունի իր դրսևորումները՝ «Գիր էի գրում...» (էջ 18), «...Միտք էի անում...» (էջ 18), «...շատ էր կապել...» (էջ 53):

Անցյալ անկատարի աշխարհաբարյան մյան ձևերը այս երեքն են:

Այժմ անդրադառնանք սահմանական եղանակի անցյալ կատարյալի ձևերին, որոնք նույնպես շատ են տաղերում: Այս ժամանակի արտահայտման համար ևս Հոլմաթանն ունի ինչպես գրաբարյան, այնպես էլ միջինհայերենյան ու աշխարհաբարյան կամ բարբառային ձևեր. ընդ որում դրանք հաճախ կողք կողքի էին գործածվում («Ես մնացի...» (էջ 14), «Ողջացայ, զալում, զալում...» (էջ 17), «Նոր ծաղկեցաւ...» (էջ 22), «...ես իմ բանին մատայ...» (էջ 19), «Նոր գարուն է հնչեաց հարաւ...» (էջ 38), «Աչքս ելաց*, խելքս զնաց...» (էջ 38), «Այսօր ծագեցաւ պայծառ արև, իմ սիրելին ետ ինձ բարև...» (էջ 44), «Գարուն եղև...» (էջ 44), «...սիրտս ընկաւ դարար...» (էջ 44), «Հա բաւ փուշացորիք ումս...» (էջ 52), «Ես եղէ քեզ հելրան...» (էջ 36), «Սրտիդ սերն աչքովդ ինձ յայտնեցիր...» (էջ 35), «Ինձ փրչացորիք...» (էջ 16), «Սիրտս վստեցիր...» (էջ 17), «Ինձ հանեցիր...» (էջ 17), «Անունս գրեցիր...» (էջ 18), «Ասացիր...» (էջ 19) և այլն:

Պետք է նշել, որ անցյալ կատարյալի շատ ձևեր նույնական են թե՛ գրաբարում, թե՛ աշխարհաբարում և թե՛ միջին հայերենում: Մասնավորապես կատարյալի եզակի առաջին ու երրորդ և հոգնակի երրորդ դեմքերը ձևով նույնն են, իսկ քանի որ Հոլմաթանը նշված օրինակներում գրեթե միշտ գործածում է հենց այդ դեմքերը, ապա չենք կարող ասել՝ նա իբրև գրաբար է դրանք գրում, թե աշխարհաբար: Սակայն եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ երկրորդ դեմքի կիրառության ժամանակ հեղինակն այդ բայերը միջինհայերենյան կամ աշխարհաբարյան ձևերով է արտահայտում (յայտնեցիր, փուշացորիք, գրեցիր, առիր և այլն), ապա կարող ենք գրաբարատիպ առաջին կամ երրորդ դեմքերի գործածությունները համարել միջին հայերեն կամ աշխարհաբար: Ուստի այս ժամանակային ձևի համար կատարած վիճակագրական հաշվարկները պայմանական են:

Կը (*կու*) մասնիկով կազմված գերկա ժամանակից հետո ամենաշատ հաճախակա-
նությամբ բանաստեղծը գործածում է վաղակատար գերկան, ընդ որում այս դերբայն ավելի շատ հանդիպում է լ վերջնահնչյունով, ինչն էլ ցույց է տալիս, որ Հոլմաթանը համեմատաբար ձգտել է գրել ավելի կանոնավոր: Բերենք օրինակներ. «Ունքերդ կապել է...» (էջ 14), «...գիր ես գրել...» (էջ 14), «...խապար ես դրկել...» (էջ 18), «...քո սիրոյդ եղեր եմ դալու դիւանայ...» (էջ 28), «...դու քան ինձ եղեր ես...» (էջ 36), «Մաշվել եմ...» (էջ 17), «Հաքել ես դիպայ զառ բաֆն...» (էջ 46), «Նաղաշին թողել ես...» (էջ 15) և այլն:

⁴ Այս և վիճակագրական մյուս մանրամասնությունները փնտրվում են վիճակագրական 1 և 2 աղյուսակներում:

* Մեր կարծիքով այս ձևը հանգավորում ապահովելու պարզառով է գործածված:

Հարակատար դերբայի կիրառություններից ևս, բնականաբար, գերծ չեն Հովնաթանի տաղերը: Այս դերբայը հեղինակը կիրառում է թե՛ կախյալ («*Գրած եմ* զալում, զալում...» (Էջ 19), «...լուսնի մման պայծառ երես *ռոլորած*...» (Էջ 14)) և թե՛ անկախ («Ես բերեմ զինի, *տապակած* հում...» (Էջ 30), «...երեսս դնեմ *ռոլորած* ծալին...» (Էջ 33), «Ապիտակ բուխարիդ վերայ *շարած* սիահ խալին...» (Էջ 33) և այլն արտահայտություններով:

Ժխտական խոնարհման գրաբարյան կիրառությունները Հովնաթանի սիրային տաղերում բացակայում են: Նա բայերի ժխտման համար գործածում է միայն միջինհայերենյան և աշխարհաբարյան կառույցներ՝ «Քեզնե՛ զատ էլ *չունիմ* կուման...» (Էջ 26), «...էլ *չի կանչեմ*...» (Էջ 34), «...*չունիս* դինար...» (Էջ 36), «...սապր ու դալար *չունես*...» (Էջ 40), «Ես սիրոյ բանի *չէի խապար*...» (Էջ 17), «...մարդ *չիմանայ*...» (Էջ 18), «...*չեմ կարիլ*...» (Էջ 33), «...մեր մէջն *չըլներ* թշնամի...» (Էջ 68), «...էլ *չկա* քան զքեզ սիրուն...» (Էջ 46), մասն՝ «...*չկայ* քան զքեզ աղիկ...» (Էջ 47) և այլն:

Հրամայական եղանակի բուն և արգելական հրամայական ժամանակների կիրառությունները Հովնաթանի սիրային տաղերում հաճախադեպ չեն, բայց կան: Այս եղանակի կազմության տեսանկյունից իրավիճակը նույնն է՝ վերցված են և՛ գրաբարյան, և՛ միջինհայերենյան, և՛ բարբառային-աշխարհաբարյան տարրեր: Հստակ բացակայում են հորդորական հրամայականի ձևերը: Բերենք օրինակներ՝ «...իմ մոտ *մստիր*...» (Էջ 16), «...Ետ *րաց* երեսիդ վրայ *չարան*...» (Էջ 30), «...իմ *մի՛ մեղադրեք*...» (Էջ 73), «...ջուր *տո՛ւր*...» (Էջ 26), «...*տեսէք*...» (Էջ 29), «...թաս *մի՛ խմեր*...» (Էջ 15), «...իմ շատ *մի աներ* աչքաւ-ունքաւ...» (Էջ 16) (գրաբարատիպ), «Տետր *գրէ* տաղով...» (Էջ 18), «...դու իմ *հետ գրուցէ*...» (Էջ 25), «...նշանց *մի՛ տալ*...» (Էջ 27), «...իմ *ասայ*...» (Էջ 33), «Իմ շատ *մի թողիլ**...», «...*դիպչիլ մի* երած սրտիս...» (Էջ 42) (խառն) և այլն:

Բանաստեղծի սիրային տաղերում գրաբարյան ստորադասական երկրորդ ապառնու մեկ կիրառություն կա՝ «Ծատ բարև *հասցէ* Յովնաթանին...» (Էջ 19), իսկ առաջին ապառնու օրինակներ չեն հանդիպում:

Հեղինակն ունի գրաբարյան անցյալ դերբայի մեկ կիրառություն՝ «*Ելեալ ես* ավանն...» (Էջ 56)՝ չհաշված այն դեպքերը, երբ անցյալ դերբայը գործածված է տաղերի վերնագրերում: Այդ երևույթը բավականին տարածված էր հայերենի միջին շրջանի հեղինակների ստեղծագործություններում:

Կրավորական սեռի արտահայտման համար Հովնաթանը գործածում է *վ (ու)* կրավորական ածանցը՝ «...վարդն *կու փովի*...» (Էջ 25), «...խելքս *կու ցրվի*...» (Էջ 25), «...հալն *կու գրվի*...» (Էջ 25) և այլն:

Հեղինակն ունի մասն ապառնի դերբայով նպատակի պարագայի 6 գործածություն՝ «...ետ *տալոյ համար*...» (Էջ 14), «...*տեսնելոյ համար*...» (Էջ 14), «...*խմելոյ համար*...» (Էջ 15) և այլն: Ապառնի դերբայի կախյալ գործածություն այստեղ ևս հանդիպում է՝ «Մ'էկ օր *զալոյ եմ*...» (Էջ 18):

Հովնաթանն իր սիրային տաղերում գործածում է մասն ապառնի երկրորդ դերբայը՝ «...է՞ր ես ինձնե՛ *հեռանալիս*...» (Էջ 22), «Մ'ենակ ու ծածուկ *մնալիս*...» (Էջ 22), «Սիրու սերդ *մոռանալիս*...» (Էջ 22), «Ռարդերս է՞ր չես *հեռանալիս*...» (Էջ 23) և այլն: Այսպիսի կիրառությունները բավականին շատ են, սակայն պետք է նշել, որ այդ ձևերը հանդիպում են

միայն երկու տաղերում և ծառայում են որպես յուրահատուկ հանգավորման միջոց:

Փաստորեն տեսանք, որ տասնյոթերորդ դարի բանաստեղծ Նաղաշ Հովնաթանը հիմնականում ձգտել է գրել ավելի կանոնավոր և բարբառային միջամտություններից համեմատաբար զերծ լեզվով: Իհարկե, նրա տաղերում միջինհայերենյան և աշխարհաբարյան ձևերն են գերիշխում, սակայն այդ դարաշրջանի հեղինակի համար քիչ չեն նաև գրաբարյան կառույցները: Այսինքն, տասնյոթերորդ դարում, քանի դեռ լիովին ձևավորված չէր աշխարհաբարը, և բարբառային ձևերն էլ համատարած էին ժողովրդախոսակցական լեզվում, կանոնավոր ու բանաստեղծական լեզվով գրել ձգտող հեղինակները փորձում էին գործածել գրաբարյան կառույցներ, ինչքանով որ դա նրանց հաջողվում էր:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 1

Գրաբարյան ձևեր	Ընդհանուր քանակ
Սահմանական եղանակ	
Ներկա	57
Անցյալ անկատար	-
Անցյալ կատարյալ	69
Ստորադասական եղանակ	
Առաջին ապառնի	-
Երկրորդ ապառնի	1
Հրամայական եղանակ	
Բուն հրամայական	25
Արգելական հրամայական	4
Հորդորական հրամայական	-

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 2

Կը (կու) – ով սահմանական ներկա	135
Անկատար դերբայ + եմ օժ. բայ	48
Ըղծական անցյալ	-
Ըղծական ապառնի	35
Ըղծական ապառնի՝ գրաբարյան ներկայի կառույցով	115
Միջինհայերենյան անցյալ կատարյալ	18
Աշխարհաբարյան անցյալ կատարյալ	11
Աշխարհաբարյան անցյալ անկատար	3

Հարակատար դերբայ	Կախյալ գործ.	33
	Անկախ գործ. (միայն որոշիչ)	23
Ապառնի առաջին		1
Ապառնի երկրորդ		81
Վաղակատար (լ-ով)	Բաստատական	77
	Ժխտական	15
Վաղակատար (ը-ով)	Բաստատական	11
	Ժխտական	2